«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Общественная организация "Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова"
"The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre'' Non governmental organization

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcentre.org

20 մարտի, 2012թ. Ե-2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ Ս. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախագահ,

Խիստ անհրաժեշտ եմ համարում ներքիիշյալ հարցը ներկայացնել Ձեր անմիջական քննարկմանը, լիահույս լինելով, որ անարձագանք չեք թողնի:

2012 թվականի մարտի 14-ին, երեկոյան ժամը 21:30-ի սահմաններում ՀՀ ոստիկանության ուժերն առանց որևէ օրինական հիմքերի, չարաշահելով իրենց պաշտոնեական լիազորություններն ու բռնի ուժի կիրառմամբ, խախտել են Երևանի Գլխավոր պողոտայի Մաշտոց-Կողբացի հատվածում (այսուհետև՝ «Մաշտոցի պուրակ») շուրջօրյա խաղաղ հավաք-նստացույցի բնականոն ընթացքը:

Բնապահպան երիտասարարդ ակտիվիստները պաշտպանում են հանրային շահն ու սեփականությունը, առողջ շրջակա միջավայր ունենալու իրենց իրավունքները, որոնք երաշխավորված են ոչ միայն ՀՀ սահմանադրությամբ, այլ նաև մեր հանրապետության կողմից վավերացված միջազգային համապատասխան պայմանագրերով: Հարկ է նկատել նաև, որ այս երիտասարդական շարժումը բնապահպանական է, նրանք չեն առաջնորդվում որևէ կուսակցության գաղափարախոսություններով և չեն հետապնդում քաղաքական նպատակներ, ինչպես իրենք են նշում՝ բնապահպանությունը դա վերկուսակցական գաղափար է:

Շուրջ 30 օր բողոքելով հանրային տարածքում առևտրի կրպակներ տեղադրելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի անհեթեթ որոշումների դեմ, ս. թ. մարտի 13-ին խաղաղ հավաքի մասնակիցները, որոնց թիվը չէր գերազանցում 100-ը, Մաշտոցի

պուրակում սկսեցին շուրջօրյա նստացույց անցկացնել, այդ նպատակով տեղադրեցին մեկ վրան, որի չափերը չէր գերազանցում 4 քառակուսի մետրը:

Բազմաթիվ խոչընդոտներ ստեղծելով, սակայն չկարողանալով որևէ կերպ հիմնավորել վրան տեղադրելու արգելքը, ոստիկանները ստիպված համաձայնվեցին գնալ զիջման: Այս մասին ասվում է բնապահպան ակտիվիստների հայտարարություններում:

Սակայն ս. թ. մարտի 14-ին ժամը 21.00-ին Մաշտոցի պուրակում ոստիկանների թիվը սովորականի համեմատ էականորեն ավելացվել է, իսկ խաղաղ հավաքի մասնակիցների հարցմանը, թե ինչով է դա պայմանավորված, ոստիկանության ուժերը ղեկավարող պաշտոնատար անձինք հերթական անգամ պատասխանել են, որ ոստիկանները փոխարինում են միմյանց, անհանգստանալու ոչինչ չկա:

Այնուհետև, Մաշտոցի պուրակում գտնվող «Մետելիցա» սրճարանի ձախ կողմում մի քանի կողմնակի անձանց միջոցով աղմուկ կազմակերպելով՝ ոստիկանները շեղել են խաղաղ հավաքի մասնակիցների ուշադրությունը, մեծաթիվ ոստիկաններով շրջափակել տարածքը, առանց նախազգուշացման հարձակվել խաղաղ հավաքի մասնակիցների կողմից տեղադրված վրանի վրա, կոտրել ու պատռել այն: Չնայած այդ պահին վրանի ներսում քնած մարդ է եղել, ում նկատմամբ ուժ է կիրառվել, ոստիկանները հրմշտել են մյուս մասնակիցներին և առգրավել իրենց իսկ կողմից կոտրված վրանը և վրանի ներսում առկա իրերը: Հատկանշական է, որ կանաչ և մաքուր մայրաքաղաքի համար մտահոգված երիտասարդ բնապահպանների միակ վրանի առգրավման համար ոստիկանական պատկառելի ուժեր են գործի դրվել, որոնք էլ, ըստ երևույթին, գործել են փորձարկված մեթոդով:

Մեծ թվով ոստիկանների առկայությունը տվյալ տարածքում, վկայում է այն մասին, որ ոստիկանության ղեկավար անձնակազմը այն հույսով է եղել, որ բնապահպան ակտիվիստները վեճի մեջ կմտնեն իրենց հետ, և նրանք «բարոյական» իրավունք կունենան «չեզոքացնել» նրանց ամեն գնով, սակայն այդ երիտասարդներն այնքան հավասարակշված ու դաստիարակված են եղել, որ այդ սադրանքին զոհ չեն գնացել:

Մինչ այս միջադեպը, ավելի քան 30 օրվա ընթացքում խաղաղ հավաքի մասնակիցների և ոստիկանության աշխատակիցների միջև հաստատվել էր բարիդրացիական հարաբերություններ, որի խաթարման արդյունքում բնապահպան

ակտիվիստները չեն կարողանում ուշքի գալ, նրանք իրենց խաբված, նսեմացված, վիրավորված և արհամարված են զգում: Ոստիկանությունն իր այս անհեռատես քայլով նպաստեց նրան, որ բնապահպան ակտիվիստների մեջ կոտրեց նրանց հավատն ու հարգանքը ոստիկանների հանդեպ: Մաշտոցի պողոտային հարող կանաչ գոտու շուրջ տիրող իրավիճակն այնքան խաղաղ էր, որ քաղաքի բնակչության մոտ կարծիք էր ձևավորվել, որ քաղաքացիական հասարակության և այնտեղ հերթապահող ոստիկանների միջև որակապես նոր փոխադարձ հարգալից հարաբերություններ են ձևավորվել: Ավաղ, հասարակության և ոստիկանության միջև հարաբերությունների այս նոր որակը ինչ-որ մեկի «սրտովը» չէր, ով, իր պաշտոնական դիրքը չարաշահելով, հանձնարարել էր վերադառնալ հին ավանդական տեխնոլոգիաներին ու մեթոդներին և գործի անցնել:

Ինչպես խաղաղ հավաքի մասնակիցներին, այնպես էլ ինձ անհայտ է, թե ո՞վ, ե՞րբ և ինչ հիմքով է քաղաքային ոստիկանությանը հրահանգել 2012թ. մարտի 14-ի ուշ երեկոյան առգրավել խաղաղ հավաքի մասնակիցների վրանը: Հարկ եմ համարում նշել, որ այդ վրանը չի եղել ինքնանպատակ կամ անհրաժեշտ միջոց բնապահպան ակտիվսիտների՝ իրենց բողոքն արտահայտելու համար, այն ավելի շատ քամուց, անձրևից, ցրտից պաշտպանվելու միջոց է եղել, իսկ ոստիկանների կողմից այն առգրավելը համաչափ ու իրավաչափ գործողություն չի եղել:

Ավելին, ես հանգում եմ այն եզրակացության, որ այն, ինչ տեղի է ունեցել ս. թ. մարտի 14-ի ուշ երեկոյան, ուղղված էր քաղաքացիական հասարակության, ազատ խոսքի և կարծիքի արտահայտման դեմ, որը դատապարտելի է իրավական և ժողովրդավարություն կերտող պետությունում: Մաշտոցի պուրակում տեղադրված վրանի <ապամոնտաժման> ընթացքում տեղի են ունեցել մարդու իրավունքների կոպիտ խախտումներ՝ ոստիկանության միջամտությունը եղել է ոչ իրավաչափ, ոստիկանությունը մինչև օրս չի կարողանում հիմնավորել, որ պուրակում վրանի տեղադրումով խախտվել է որևէ մեկի իրավունքն ու ազատությունը:

Իմ կարծիքով, ս. թ. մարտի 14-ին ժամը 21.30-ին Երևանի Մաշտոցի պուրակում տեղի ունեցած իրադարձությունն իր նշանակությամբ գործնականորեն ի չիք դարձրեց Հայաստանի <Հանրապետական> կուսակցության վերջին համագումարում Ձեր ելույթի քաղաքացիական, հայրենասիրական ողջ պաթոսը: Շատ ցավալի է, որ խաղաղ հավաքի մասնակիցների վրանը <հաղթականորեն> <գրավելու> մասին որոշումն ընդունողը չի

մտածել մեր երկրի ապագայի մասին, չի լսել կամ չի ծանոթացել Ձեր ելույթի հիմնական դրույթներին կամ լսել և ծանոթացել է՝ ի միջիայլոց:

Ելնելով վերոշարադրյալից, խնդրում եմ Ձեզ քննարկման առարկա դարձնել ս. թ. մարտի 14-ի ժամը 21.30-ին Մաշտոցի պուրակում խաղաղ հավաքի մասնակիցների նկատմամբ ոստիկանության գործողությունների իրավաչափության ու համաչափության հարցերը, հանձնարարել պետական լիազոր մարմինների ղեկավարներին անցկացնել ծառայողական քննություն և մեղավորներին ենթարկել պատասխանատվության իրենց պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար:

Լիահույս եմ և ակնկալում եմ Ձեր անմիջական միջամտությունը:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Գործադիր տնօրեն